

XX ԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ

ԺԱԿ ԴԵՐԻԴԱ

Յուզական-գիտակցական մեր ողջ կառույցը իր մեջ տարրեր ունի, որոնց տրված չէ մինչև վերջ դրսևորվել – ի հայտ դրվել, և ինչ կարողանում ենք երևութականացնել (լինի որպես գիր, թե հնչույթ)՝ տարրերն իրենք անմիջապես հակընդդիմանում են երևութականացման այդ փաստին, որքանով մնում են խորթ այն իրականությանը, ուր դրսևորվում են: Այդ զգայությունները որպես մեր ոգեկանի բաղկացուցիչներ, երբեք չեն հաշտվում երևույթները «իրենցով» բացատրելու (առավել ևս, երբ այդ երևույթները արտաքին աշխարհին չեն պատկանում) մեր ցանկության հետ: Նրանք չեն համատեղվում, «չեն կաչում» երևութականացման պրոցեսին: Սա մղել է և՛ Պլատոնին, և՛ Դեկարտին, և՛ Բերգսոնին, և՛ Յուսենին հայեցման ինտուիտիվ մեթոդի, որը ինքնին գիտական ոչինչ չունի իր մեջ, որքան էլ փորձել են գիտականացնել: Դա ներհայեցում է ուղղված ֆոնեման (ներքին ծայն, հնչույթ), ինչը Դերիդան մույնպես առաջնային է ընդունում: Դերիդայի փիլիսոփայությունը *թախիծի զենեալոգիա* է, և դա նկատի ունի Պողոտոգան, երբ մշում է. «Ընթերցանության և Գրի ձեր տեխնիկան ես դիտում եմ... չեզոք մոդալության ծածկույթի տակ»: Ի դեպ, մույն մպատակը ուներ և Յուսենը, որ հակառակ վերացարկման և հայեցման այլ մեթոդների, ուզում էր այդ տարրերին ստիպել ինքնաբացահայտվել զուտ ինտուիտիվի շնորհիվ (...թախիծը ինքնին չեզոք է):

Լոգոսի իմաստներից մեկը հնչունային խոսքն է (phonem-ի, հնչույթի վրա կառուցված), այն, որ դեռ գրառված չէ և լիովին պատճառաբանվում է *լոգո-ֆոնո-ցենտրիզմ* տերմինազուգակցումը, բայց Լոգոսի իմաստային տարբերակումների մեջ է նաև *հավաքագրել-կարգավորելը*՝ ըստ մտածողության ռացիոնալ օրենքների՝ ի հակադրություն միֆականի: Դերիդան ընդդիմանում է Լոգոսի հենց այս *հավաքագրողական-կարգավորողական* ֆունկցիային, ինչը և ակնհայտորեն դրսևորված է նրա տեքստերում: Դերիդայի տեքստերը, ասես, ակամապատված լինեն և պատահական ընթերցողը կարող է առաջին իսկ տողի վրա ենթարկվել դիվերսիայի (Ֆուկոն գործածում է տեռոր բառը), եթե իր հետ չունի «ալկանաորսիչ»: Այսքանով է նրա *թախիծի զենեալոգիան* աղերս առ միֆականը, չկարգավորվածը, տրամաբանության չենթարկվողը, ուստի զարմանալի չէ որոշ ընթերցողների բողոքը՝ մենք չենք հասկանում... քեզ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆԹՅՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑ ԺԱԿ ԴԵՐԻԴԱՅԻ ՀԵՏ

Վալերի Պոդդորոգա - Պարոն Դերիդա, եթե դեմ չեք, մենք այս գրույցը կարող ենք բնութագրել այսպես՝ փիլիսոփայությունը և գրականությունը, ինչը կարծում եմ, հոգեհարազատ է և համընկնում է թե՛ մեր, թե՛ ձեր նպատակադրումներին:

Ժակ Դերիդա - Դեմ չեմ, իհարկե, թեև երկխոսությունը, ինչպես երևում է, պայմանավորված է լինելու, թե մեզ ընծեռված հնարավորություններից ո՞ր մեկն ենք նախընտրելու՝ ըստ անհրաժեշտության մնալով՝ ենք թեմայի ընդհանուր շրջանակներում, թե՞ ամցնելու ենք իմ ուսումնասիրություններում առանձին «մեթոդաբանական» հատվածների և ռուս գրականության փիլիսոփայական հենքի նկատմամբ այդ մեթոդների կիրառությանը, որը, պետք է ասեմ, խիստ հետաքրքրում է ինձ:

Վ.Պ. - Վստահ եմ՝ դրանից որևէ մեկը մեր գրույցում կիրականացվի, ուստի թույլ տվեք սկսել մի ուշագրավ խնդրից, որը ինձ շատ է հետաքրքրել: Վերջին ժամանակներում ռուս գրականության ավանդույթները (Գոգոլից մինչև Դոստոևսկի և ապա՝ ընդհուպ Բելի և Պլատոնով) ուսումնասիրելիս ես մի անակնկալ իրողության բախվեցի: Այդ ավանդույթը խիստ զգայուն է գեղարվեստական ստեղծագործություններում լեզվի և նրա ունեցած դերի նկատմամբ, բայց միաժամանակ դա փորձ է, ի վերջո, լեզուն որպես *օժանդակ միջոց* օգտագործելու, այլ կերպ ասած, լեզվի հնարավորությունները ըստ արժանվույն յուրացնելով, նույն ավանդույթը բացառում է լեզվական օնտոլոգիան (գեղարվեստական փորձի արմատավորումը լեզվի արտահայտչական առանձնահատկություններում): Ավելին՝ չի դադարում մի արտասովոր պայքար ընդդեմ լեզվի՝ որոշ գաղափարներ ի ցույց դնելու, որոնք, իհարկե, համարժեք արտահայտություն չեն գտնի առանց հաստատագրվելու տվյալ լեզվի մեջ: Եվ ի՞նչն է ուշագրավ՝ *այդպես մի կողմից լեզուն մաքրագատվում-նորացվում է, մյուս կողմից՝ աղավաղվում են նրա հանրահայտ-նորմատիվ կառույցները*: Այստեղ ես համուն ոչ լեզվական ռեալության պայքար եմ տեսնում և զոհասեղանին՝ լեզուն է:

Սույն առնչությամբ, ահա թե ինչու ինձ համար ուսումնելի էր այն, ինչ որ ձեր տեքստերում գտա և որոնք խորհրդածության մյուս էին դարձել ինձ համար: Դուք ձեր ուսումնասիրություններում (որքանով հնարավոր է դրանք քննել) տեքստի ո՛չ լեզվաբանական ռեալության, ո՛չ էլ նույնիսկ ընդունված տեքստային չափանիշի մեջ եք, այլ ավելի ներքև՝ տարաբնույթ *միկրո-տեքստաբանական կառույցներում* եք, ուր լեզվաբանությունը այլևս գերիշխող չէ, և տեքստը

մասնատված է մանրագույն հնչյունակազմական-գրաֆիկ բաղադրություններին: Արդյոք չե՞մ վրիպի, եթե ենթադրեմ, որ վերլուծության այն մեթոդը, որը դուք եք որդեգրել, նպատակայնորեն ձեզ հեռացնում է տոպոլոգիական լեզվից²:

Ժ.Դ. — Ի՞նչը նկատի ունեք՝ «տոպոլոգիական լեզու» ասելով:

Վ.Պ. — Թերևս, ինչ որ չափով, անսովոր այս արտահայտությունը շեշտելով, միայն իմանենտ տրամաբանությամբ այն ռեալությունը նկատի ունեմ՝ նրա այն առկայությունը, որը սկզբունքորեն համատեղելի չէ լեզվի հետ: Հավատում եմ, որ գոյություն ունի «նախա» կամ «վեր» լեզվական այդպիսի ռեալություն (դա հիմնավորված է ռուս գրականության մեջ բազմաբնույթորեն դրսևորված տարածության ֆանտազմով)³, երբ առաջադրված իդեաները, ձգտումները, բարձրագույնին ապավինելը, այս կամ այն կերպ կապված են առանձին տարածական կերպար-ստեղծումների հետ, ինչը և իր հերթին լեզվի նկատմամբ հավատը կասկածելի է դարձնում: Չեք espacement⁴ հասկացությունը, ինչպես և նրան տրված մեկնությունները, որոնք տեսնում ենք ձեր բազմաթիվ գրքերում, հոդվածներում, գրույցներում, ինձ ակնհայտորեն ներկայանում են որպես տոպոլոգիական: Ռուս ավանգարդ փիլիսոփայության մեջ կան espacement-ին հոմանիշ հասկացություններ (Տիմյանովի «հնչյունային էվոլյուսիոնտությունը»⁵ (համարժեքությունը), Վերտովի «ինտերվալը», Էյզենշտեյնի «ատրակցիոնը» և այլն): Թե espacement-ին որքանո՞վ են մույնիմաստ նշված հասկացությունները, այլ հարց է: Այնուամենայնիվ, կարծում եմ՝ դրանց օգնությամբ հնարավոր է բացատրել տոպոլոգիական այն թախիծը, որ ներառկա է ռուս մշակույթում: Դա թույլ չի տալիս չեզոքացնել-ոչնչացնել այն, ինչը որ տեսնում ենք, իրոք, մեր ողջ ռուս մեծ գրականության մեջ որպես տոպոլոգիական: Դոստոևսկու «Ոճիր և պատիժից», Անդրեյ Բելիի «Պետերբուրգից», Անդրեյ Պլատոնովի «Չեմբեզուրից» ընդհուպ Խլեբնիկովի «Ջանգեզին» մի գրականություն է, որն ունի իր տարածականությունը՝ հատուկ տարածությունը: Այստեղ լեզուն տարածական-տոպոլոգիական կերպարներից է արտածված: Կերպարները, թվում է, տրված են, արդեն տեսանելի են — շոշոփելի, ասես, ձեռքիդ տակ են «բուսնել» և մնում է միայն յուրաքանչյուր կերպարի լեզուն գտնել. գտնել ինչ գնով էլ լինի, եթե պահանջվում է մույնիսկ ստեղծել նոր լեզու կամ խեղել հիմը:

Ժ.Դ. — Կփորձեմ մի քանի խոսքով պատասխանել: Բայց նախ կուզեի որոշակի և խիստ ընդհանուր նկատումներով անդրադառնալ համառորեն տարածված և գրեթե անհարթելի մի թյուրիմացության: Դա վերաբերում է լեզվի հետ կապված իմ քննասիրությունների էությանը: Սովորաբար դեկոնստրուկցիան ներկայացնում են այնպես, ասես ես մերժում եմ «լեզվից» դուրս որևէ բան: Դա իբր ինձ համար միջոց է լեզվի մեջ ամեն ինչ ներառնելու: Այդպիսիք նախընտրում եմ՝ ինչը ես տեքստ եմ անվանում, ներկայացնել որպես «լեզու»: Մի առիթով գրված «տեքստից դուրս ոչինչ չկա» իմ արտահայտությունը ոմանք կարող են թարգմանել և մեկնաբանել իբրև «լեզվից դուրս ոչինչ չկա»:

Մինչդեռ, եթե խոսենք առանց բառաբարդությունների, խոսենք պարզ, խնդիրը միանգամայն հակառակն է: Դեկոնստրուկցիան սկզբնապես եղել է լոգոցենտրիզմի⁶ և ֆոնոցենտրիզմի⁷ կազմալուծարում-դեկոնստրուկտիվացում, որպես փորձ՝ միտքը զերծ պահելու լեզվաբանական մոդելների տիրապետությունից, որը մի ժամանակ մեծ ազդեցություն ուներ, նկատի ունեմ՝ 60-ական թվականներին: Այնպես որ այս թյուրըմբռնումը խորը արմատներ ունի. ես կասեի՝ գաղափարա-քաղաքականացված իր պատճառաբանությամբ՝ դեկոնստրուկցիան ներկայացնել ուղիղ հակառակը. օրինակ, գրականությանը վերաբերող խնդիրներում սակավ չեն նրանք, ովքեր իմ ըմբռնումները կապում են ռեֆերենտային կասեցում⁸ հասկացողության հետ, այնինչ սա հակասում է իմ ջանքերին, հակընդդեմ է ուղղակիորեն: Որպեսզի լոգոցենտրիզմը և լեզվաբանական մոդելները, որոնք այնպես լայնորեն իշխում էին 60-ականներին, ենթարկելի դեկոնստրուկտիվության, իհարկե, ես ստիպված էի փոխել տեքստի հետ կապված ըմբռնումները, ստիպված էի ավելի ընդհանրական դարձնել այն: Այս առումով տեքստ հասկացությունը սահմանափակվում է և «չունի իրենից դուրսը», բայց սա չի նշանակում, որ այն պետք է նույնացնել լեզվի (խոսակցական ակտի) հետ՝ ամենախիստ իմաստով: Սիս արմատական մի թյուրըմբռնում, որը, կրկնում եմ, ըստ էության, անհաղթահարելի է: Հիմնականում տեսնում ենք դեկոնստրուկցիայի քննադատություն, ինչը ավելի է սնում այդ թյուրըմբռնումը: Եվ քննադատությունը ամենուր է՝ Ֆրանսիայից սկսած մինչև Միացյալ Նահանգներ: Ֆուկոն, օրինակ, փորձում էր դեկոնստրուկցիան սահմանափակել տեքստի տարածքով, այն ինչը զրի է առնվում թղթի վրա, ինչպես դեկոնստրուկցիայի դեմ այն մեղադրանքներն էին, թե ես ամեն ինչ «գրադարանային»-ի, գրքերի «հավաքակույտի» հանգեցնելու անհեթեթ միտում ունեմ: Այնպես որ, ինձ համար գոյություն ունի «լեզվից դուրսը», որին չի ուզի թեթևորեն ռեալ-բնութագրում տալ, որքանով ռեալությանը վերաբերող պատկերացումները ծանրաբեռնված են մետաֆիզիկական մի շարք ենթադրություններով: Այս ընդհանրական մոտեցումից հետո այժմ ուզում եմ անդրադառնալ Վալերիի մտքին և չեմ կարծում՝ սկզբունքորեն դատապարտելի բան կա այն ենթադրության մեջ, թե գրական ավանդները (մասնավորապես Վալերիի մատնանշած) պայքար են լեզվի դեմ՝ լեզվից անդին տեսանելու-գտնելու: Կարծում եմ լեզվից «անդինը» կա, իրապես կա «Այն», որ լեզվի սահմաններից դուրս է: Ամեն ինչ մեր մեկնակերպից է կախված:

Վ.Պ. – Լեզվի սահմաններից դուրս տեքստն է...

Ժ.Դ. – Այո՛: Բայց կա *Տարբերությունների* խնդիր: Տարբերակումների խաղը «լեզվի սահմաններից դուրս» արտահայտության մեկնաձևերի մեջ է՝ ուղղված ինչպես այդ լեզվին, այդպես էլ տեքստին և «հետքերին»: Ինչը մենք այստեղ «լեզվի սահմաններից դուրս» ենք անվանում, լայն իմաստով, ամենատարբեր տեքստերի *հետք-հյուսվածք* է նշանակում: Ինչ վերաբերում է Վալերիի ձևակերպած «տոպոլոգիական լեզու» արտահայտությանը (տոպոլոգիական իր կա-

ռուցվածքով [եզվի սահմաններից դուրս), ապա ինձ համար կառուցողականորեն անխուսափելի է: Ես կառաջարկեի Վալերիի հարցադրումը վերասահմանել այսպես. տոպոլոգիական մի [եզվի տեսակը ուրիշ մեկ այլ [եզվի միջոցով վերափոխության ենթարկել, ընդ որում այնպես, որ տոպոլոգիական և ոչ տոպոլոգիական նրանց տեսակների միջև տարբերությունը հակընդդիմական չլինի, այլ, եթե կուզեք, «տարբերությունների խաղ» կամ այդ հակընդդիմությունը տվյալ տոպոլոգիական [եզվի ներսում լինի: Պարզաբանության համար պետք է անդրադառնալ *espacement*-ին, որը միմիայն «ինտերվալը» չէ: Անգլերեն *spacing*-ը լիովին *espacement*-ի իմաստը հաղորդում է, իսկ այն՝ որպես ֆրանսերեն բառ, և ինչպես ես եմ գործածում, ունի *միջնա-տարածք* (հմտ. «ինտերվալ»), *բացվածություն* նշանակությունը:

Վ.Պ. — Բայց չէ՞ որ *espacement* հասկացությունը այս իմաստով միավորում է *հեռացումը* (տարածության մեջ) այն *հեռացումին*, որ ժամանակային առումով է:

Ժ.Դ. — Այո՛, և հենց այս է, որ ես անվանել եմ *ժամանակի տարածականացում-տարածակերպավորում*. դա ժամանակի բազմա-կերպությունն է տարածության մեջ: Նման կառուցակարգի դեպքում ժամանակ և տարածություն հասկացությունների մեջ չի կարելի տարբերակում դնել կամ նրանց դիտել հակընդդեմ: Սա չէի ասի՝ հիմնարար կառույց է, բայց ամենուրեք է և միանգամայն անփորձառելի-անընդգրկելի, ոչ միայն կոնկրետ է, ասենք Տիմյանովի «հնչյունային ինտերվալի» հետ կապված, այլև բոլոր այդ հետաքրքրական օրինակները բացարձակորեն համընդհանրական այդ կառույցից են:

Ամեն մի փորձ իր մեջ ունի հղում - դա հղում է ինչ-որ այլ բանի, ինչպես ասենք «հետքի», տեքստի, իսկ որ «հետքը» հետք թողնի, անհրաժեշտ է ծավալվել-տարածվել, *տարածականանալ*: Հետևապես, եթե տոպոլոգիական [եզվի և տարածականության միջև առկա է խոր կապ, անհնար է այդժամ տոպոլոգիական [եզուն հերքելու մասին նույնիսկ մտածել, այն ենթարկել ետընթացքի-չեզոքացման: Միակ հնարավոր բանը, որ կարող ենք փորձել, դա որոշ առանձին տեսակի կամ առավել տիրող տոպոլոգիական [եզվականությունների *վերատեղայնացումն* է այլ տարածք: Սա նշանակում է՝ տարածականանալու փորձի՝ [եզվի և տարածության կապի վերափոխում: Հայդեգերը, ինչպես գիտեք, ինչ-որ տեղ նշել է, որ պատահականություն չէ, որ *ամենաառկայողը* նրանք են, ինչը մենք անվանում ենք տարածական մետաֆորներ: Լեզուն չի կարող ինքնագոյել առանց *տարածական մետաֆորների*, հետևաբար մտածել, թե հնարավոր է հասնել այդպիսի մետաֆորների հերքման կամ քննադատության, յուրատեսակ մետաֆիզիկական մի երազանք է: Սա չի նշանակում մենք պետք է ընդունենք տարածականի հետ կապված ցանկացած մետաֆոր, բայց մենք ենք, ի վերջո, որոշում մտան մի մետաֆորը մեկ այլով փոխելու խնդիրը:

Մեկ նկատում ևս. քանի որ խոսքը առնչվում էր տարածական մետաֆորին, ես փորձում էի խնդիրը վերլուծել ըստ տեքստերի, ուր համանման արժարժում-

ներ կան, հատկապես «Սպիտակ առասպելաբանությունում», ինչպես և ըստ մի տեքստի, որ «Psyche»-ում և նույնիսկ «Geschlecht»-ում տեղ գտած «Le retrait de la metaphore»-ից է: Դրանք պարունակում են որոշ նյութեր, որ կապված են Dasein¹²-ի ամխուսափ-անպայմանական տարածականության հետ: Բայց, ահա, նմանատիպ մոտեցում այստեղ անհնար է, որքանով դա ձեզ վերապահված խնդիր է և ձեզ պատկանող տարածություն, և ռուս գրականության օրինակներով պետք է պարզաբանվեն այդ խնդիրները: Ինչպես հիշեցնում է Պ. Վալերին, համոզված եմ, որ ձեր գրական ավանդույթներում, սկսած Գոգոլից, կուտակվել են որոշ առանձնահատուկ հիմնախնդիրներ, քննարժան հարցադրումներ, և այս ամբողջը հենց այն է, որը վերապահված է ձեզ լուծելու:

Վ.Պ. — Ժամանակին դուք մշել եք, որ բանականությանը ընդդեմ ցանկացած դրսևորում հնարավոր է դառնում միայն մի դեպքում՝ նույն բանական ձևի մեջ կազմավորվելու շնորհիվ: Սա ասվել է Մ. Ֆոկոյի «Դասական դարաշրջանի խելագարության պատմություն» աշխատության առիթով, որը, ի դեպ, միանգամայն բանական սահմաններում է գրված: Այս պարադոքսը ինձ միշտ գրավել-հետաքրքրել է: Ամենայն հավանականությամբ նույնաման իրավիճակ է նաև լեզվի մեջ: Կարծում եմ՝ հակա-լեզվական որևէ դրսևորում (համեմայն դեպս գրականության մեջ) հնարավոր է իր իսկ՝ լեզվի միջոցով, այդ «լեզվականի» շնորհիվ: Այս պարագայում պարզվում է, որ վերլեզվական ինտուիցիաները, այդ թվում տարածականության հետ կապված (ինչպես ասեմք՝ Ա. Պլատոնովի լեզվաոճի մեջ տոպոլոգիական-տարածական «ձևախեղումները»), միշտ գրառված-ներերևութացած են լինում այս կամ այն լեզվաձևերի մեջ: Սա է միակ նախապայմանը կռահելու «լեզվից անդինը», որսալու և վերլուծության ենթարկելու: Թե ինչպես պետք է դա որսալ-կռահել, այլ հարց է. բոլոր դեպքերում, եթե չենք կարողանում, մշանակում է լեզվի մեջ «լեզվից» բացի ուրիշ ոչինչ չկա:

Իսկ այժմ անդրադառնամք մեր խնդիրներին ըստ ավանդական փիլիսոփայական այն թեմաների, որոնք, ուզում ենք թե ոչ, «այլ կերպ մտածելու» մեր ամեն մի փորձի մեջ այսօր էլ առկա են: Ասեմ, որ ինձ մասնավորապես հետաքրքրում է, թե լեզվի և տեքստերի հետ աշխատելիս իմացաբանական (եթե կարելի է ասել) ի՞նչ «կարգավիճակում» են իմ ջանքերը. ի՞նչ ճանաչողական արդյունք ենք ունենալու, կամ նման ճանաչողության հասնելու ի՞նչ պայմանակերպեր են պետք: Ինչպե՞ս հարաբերակցել այդ աշխատանքների ընթացքում *ինքնահատուկը*՝ հանրնդհանրականին-ունիվերսալին, *դետալայինը-մասնատվածը*՝ հասկանալի, ըմբռնելի լինելու ցանկությամբ: Սույն հարցադրումները երեկ ձեր դասախոսության մեջ ձևակերպեցիք փաստորեն այսպես. կարո՞ղ ենք հաշտեցնել-համաձայնեցնել «իդիոմատիկը» և «ռացիոնալը», և առհասարակ, կարո՞ղ ենք մեր ընտրության մեջ կանգ առնել մեկի կամ մյուսի վրա: Ահա և մենք, ըստ էության, մի բեռնում («իդեոմատիկ») առանձնաձևերի-մասնահատուկների գոյակցությանն (ազգային, մշակութային և այլն) ենք առնչվում, (բացի դա՝ բախվում

ենք բացահայտորեն անփոխարինելի-«անթարգմանելի» և աններկայացնելի միավորների մեծ քանակությանը), մյուս բևեռում հասկացվելու («թարգմանվելու»), հաղորդակցվելու անհրաժեշտությունն է (Aufklärung)», որը խորապես զգում է մեզանից յուրաքանչյուրը: Լինում են, հավանաբար, այնպիսի պատմաշրջաններ, երբ որևէ մշակույթ կամ ինդիվիդ այդ «երկմիացյալ» հարցադրման այս կամ այն մասն են (իդիոմատիկը թե՛ ռացիոնալը) ընդունում՝ որպես առավել նախընտրելի-նշանակալիցը: Այդ դեպքում ընտրությունը կատարվում է ինքնին, կատարվում է ինքնաբեր: Եհիշտ է, այստեղ ևս վիճակը այնքան էլ հեշտ լուծվող չէ, որովհետև երբ սկսում ենք որևէ ընդամենական գոյակցում կոնկրետացնել-մասնահատել, ամփոփապես նկատվում է, թե որքան վտանգավոր է այս կամ այն մանրամասնության «խռովահույզ» էկզալտացիան¹²: Այսպես ուրեմն. ես ուզում եմ լսել ձեր գնահատականը՝ ի՞նչ եք մտածում սույն խնդրակնի իրազործելիության և անիրազործելիության շուրջ (metier impossible), ընդ որում, եթե իրականում ընտրությունը անհնար է, կարելի է մի՞թե և՛ առանձնահատուկը (սպեցիֆիկը), և՛ ընդհանրականը (ունիվերսալը) իրականացնել մեկ միասնական հանգուցալուծմամբ: Դիալեկտիկները, ըստ երևույթին, ավելորդ շտապողականությամբ հավակնում են այդ բանին, բայց մոտեցումը ինչպե՞ս է լինելի խնդրին, եթե, բառիս խստագույն իմաստով, այն լուծել հնարավոր չէ:

Ժ.Դ. – Այո՛, հնարավոր չէ...

Վ.Պ. – Սկզբունքորեն անկարելի է, բայց միևնույն է, հարցը մեզ բոլորիս հուզում է:

Ժ.Դ. – Մինչ այդ խնդրին անդրադառնալը, մինչ իմ պատասխանը, որ անխուսափելիորեն հուսադրող քիչ բան ունի, ուզում եմ ընդգծած լինել, որ լեզվի մեջ ամարտահայտելին (ինչը դուք համարում եք լեզվի անփոխարինելի-թաքուցյալ հնարավորություն և որի մասին խոսվեց երեկ դասախոսության ժամանակ) բնավ էլ «լեզվից դուրս» ինչ-որ բան չէ՝ մեկուսացած-կտրված իդիոմից: *Չարտահայտվածը*, ինչպես ասեմք այստեղ՝ Ռուսաստանում կամ ԽՍՀՄ-ի պատմության մեջ հայտնի ժամանակաշրջաններում, անխցելիորեն կապված է արտահայտվածին ինչը արտահայտում է գտել. այնպես որ լեզվի *ամարտահայտ* մասը չեզոք ինչ-որ բան չէ, դատարկ տարածություն չէ, նեզատիվ չէ: Դա դետերմինացված է, պատճառակցված է-կապակցված հենց նրան...

Վ.Պ. – Ինչն էլ որ արտահայտո՞ւմ է գտնում:

Ժ.Դ. – Այո՛, կապված է այն ամենին, ինչը ասվում է և միաժամանակ՝ ինչը արգելվում է ասել, ընդ որում պարտադիր չեն քաղաքական հալածանքներ, նույնիսկ եթե չասվածը շատ ավելի խորն է, քան կարող է ենթադրվել: «Չասված-չարտահայտված» չի նշանակում՝ ինչ մեր մտքով անցնում է, չի նշանակում «ոչ-լեզու», ինչպես կարող են կարծել պարզագույն մոտեցմամբ, այլ օտար չէ այն ամբողջին, ինչ ասվում է կամ գրառվում: Եվ քանի որ այդպես է, դուք, ավելի ճիշտ՝ մենք, պետք է այդ «չասված-չարտահայտվածը» ասվածի միջոցով

ենթարկեմք արտաբերման-հնչյունականացման (արտիկուլիացիա): Այդժամ է, որ ծագում է ծիսական հարցը. գոյություն ունի՞, արդյոք, այդ հնչյունականացման-արտաբերման մեկ միասնական արտահայտչամիջոց, թե՞ տարաբնույթ են մոտեցման տարբերակները: Ասենք, անհրաժեշտորեն, հիարկե՞, բազմաբնույթ են: Իսկ եթե կարծում եք, որ կարող եք մեկ արտահայտչաձև գտնել, վստահ եղե՞ք ձեր գտածը գործածելի չի լինի: Խնդրի լուծումը յուրաքանչյուր դեպքի համար խիստ կոնկրետ պարագաներով է պայմանավորված՝ կոնկրետ-եզակի առանձնատիրությով: Սա հաստատվում է ոչ փորձնական նախօրինակով (եմպիրիկորեն) և որիս անդրադառնալու համար, ես համոզված եմ, մեզանից յուրաքանչյուրը իր կերպը պետք է ունենա: Անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն քիչ թե շատ համընդհանրական իրավիճակները, որքանով, ասենք, այստեղ՝ Ռուսաստանում այսօր հարցը այլ կերպ է դրված, քան օրինակ, Լեհաստանում է, Յունգարիայում, Ռումինիայում կամ Գերմանիայում: Լեզվի մեջ «չասված-չարտահայտվածի» ռազմավարության խնդիրը նմանապես առաջադրված չէ նաև ձեր և Արևմտյան Եվրոպայի միջև... և այսպես շարունակ: Նույնիսկ այստեղ՝ ձեր ներսում՝ մի համրապետությունից մեկ այլ համրապետություն իրավիճակը փոփոխվում է և տարաբնույթ է, իսկ այդ համրապետություններից որևէ մեկի մեջ խնդիրը այլ կերպ է դրվում՝ մի փորձադաշտի (լաբորատորիա) և, ասենք, Գիտությունների ակադեմիայի մնացած հատվածի հարաբերությամբ: Ավելին՝ այն տարբեր է առանձին անհատների պարագայում: Այնպես որ, սա հաստատվում է ոչ փորձօրինակով, քանի որ մեզ պարտավորում է ոչ թե հարմարվել սույն խնդրակնանում որևէ ռազմավարության կամ փոխառել այն, այլ յուրաքանչյուր անգամ *հայտնագործել-ի հայտ բերել* մեզ համար և ամեն մի առանձին դեպքում պարտադրված ենք լինում *արտահայտչամիջոցների մեր կերպը-տեսակը հայտնաբերելու՝ մեր իղիումը*, իսկ մեր պատասխանները *ի հետևանս դառնում են իրիոմատիկ*:

Կարևորագույն խնդիրներից է, թե ինչպես ենք հաշտեցնելու, ինչպես ենք «մերելու» մեկը մյուսին՝ *իղիումը* և *համընդհանրական մտածողությունը* կամ իրիոմը և դրսի լեզվաշխարհը՝ համընդհանուր պարզ լեզուն: Այսպես շարունակաբար է՝ համաձայն մոդեռնիստական կամ պոստմոդեռնիստական Aufklärung հասկացության թելադրած իղեալի: Այսպիսով՝ հիմնախնդիրը իղիոմատիկ արժեքները հաշտեցնելն է, որոնք որոշակիորեն անթարգմանելի են, չէ՞ որ ինչպես չկա բացարձակորեն անթարգմանելին, այդպես էլ չկա բացարձակորեն թարգմանելին: Մի խոսքով՝ հարցը այն է, թե ինչպե՞ս ենք հաշտեցնելու *թարգմանությունը* և *թարգմանված-անթարգմանելին*, իղիոմատիկ լեզուն համաձայնեցնելու համընդհանուր մտածողությանը, ինչպե՞ս ենք ապահովելու այս «միջնորդածությունը» և այլն: Այս երկու բևեռների հաշտեցման առնչությամբ, ինչպես պատասխանները չեն կարող միատեսակ լինել, այդպես էլ նույնը չի կարող լինել դրանց տակ դրված ստորագրությունը: Իսկ սա նշանակում է՝ չկա ընդհանուր

կանոն և ոչ ոք չի կարող համագործակցան մի որևէ խորհուրդ տալ:

Վ.Պ. — Եթե ոչ «ընդհանուր կանոնին», ապա թարգմանական խնդիրներին դա զոնե վերաբերո՞ւմ է:

Ժ.Դ. — Ահ, այդ թարգմանական խնդիրները: Ամենաընդհանրական իմաստով ես թարգմանության մեջ «տնտեսող» մոտեցում ունեմ: Ուզում եմ ասել, որ անհրաժեշտ է առավելապես հարուստ իդիոմներ թարգմանել և, ըստ այդմ, ես իմ խնդիրը ձևակերպում եմ այսպես. մի լեզվից մեկ այլ լեզվի թարգմանել ամենաանթարգմանելի բանաստեղծությունը: Անտարակույս, սա դժվարագույն հարց է, գրեթե անիրագործելի և իբրև այդպիսին, վերածակերպում եմ հետևյալ կերպ. պահպանել իդիոմը և միաժամանակ պահպանել թարգմանությունը, ինչպես և այդ թարգմանության հստակությունը: Թվում է՝ հնարավոր չէ պահպանել, և այստեղ իմ ձևակերպման մեջ հակասություն կա, բայց այդպես չէ, քանի որ իդիոմը ինչ-որ մթին-ինքնաբավ հասկացություն չէ, այլ տվյալ լեզվի ներսում մնալով անթարգմանելի-անարտահայտելի, այնուամենայնիվ, թարգմանվում է՝ ասվում: Իդիոմը կարծրացած-քարացած չէ: Նույնիսկ «ամենաիդիոմատիկ» իդիոման թարգմանության կարիք ունի. այն որոշ համընդհանրական գործածության է պատկանում, և ամենևին էլ սահմանագիծ չէ՝ ուստիկանական հսկողության տակ: Իր բանաստեղծությամբ ռուս կամ ֆրանսիացի պոետը արդեն իսկ վավերում է մի բան՝ իր ստորագրությամբ և դրոշմով, որը կարիք ունի թարգմանվելու: Նա հակված է սահմաններ խախտել: Ուստի, դրսևորվել մի լեզվով, չի նշանակում անմատույց մնալ թարգմանության, խոչընդոտների առիթ տալ այդ առումով, այլ հակառակը. ենթացում ենք թարգմանվելու անհրաժեշտություն, այլ լեզվով հնչելու աղերս: Ինչ վերաբերում է թարգմանությանը - այն իրականացվում է իդիոմատիկ բանաստեղծության կամ իդիոմատիկ դարձվածքների սահմաններում...

Վ.Պ. — Ուզում եմ այստեղ մի օրինակ հիշեցնել: Խոսքը Դուգլաս Ֆոֆշտադտերի թարգմանական մի փորձին է վերաբերում: Նա մաթեմատիկ է, լեզուների գիտակ: Չեզ հավանաբար ծանոթ է այս անունը:

Ժ.Դ. — Այո:

Վ.Պ. — Ֆոֆշտադտերը Կլեման Մարոյի մի բանաստեղծություն տվեց թարգմանելու իր մտերիմներին, որոնք տարբեր երկրներից էին և խնդրեց բոլոր հնարավոր միջոցներով ուղարկել իրեն թարգմանությունների այն տարբերակները, որ այս կամ այն կոնկրետ թարգմանիչը կատարել է այս կամ այն կոնկրետ հանգամանքներում: Ապա նա հայտնեց իր մտադրությունը. համադրել-համատեղել բոլոր այդ տարբերակները և որքան շատ՝ այնքան լավ: Ըստ երևույթին, դա էր պատճառը, որ ինձ ուղարկելով Մարոյի բանաստեղծությունը, միաժամանակ, մասնավորում էր, թե ցանկալի է թարգմանության ռուսերենի մի քանի տարբերակ, ոչ թե մեկը, ընդ որում կարևոր չէր արձակ է լինելու, թե չափածո: Սա ի՞նչ է վկայում - հավանաբար հետևյալը. ի՞նչ լեզվով էլ թարգմանում ենք, մենք միևնույն է...

Ժ.Դ. – Ամեն անգամ, ասես սկսելով իսկ, ինչ-որ բան հայտնագործում ենք:

Վ.Պ. – Այո, և միաժամանակ միշտ բախվում ենք բարդության. ինչը թարգմանելի է մեկ լեզվով, միանգամայն անմատույց է մեկ ուրիշ լեզվի: Ինչպե՞ս գտնել լուծումը. դարձյալ անհնարին խնդիր է...

Ժ.Դ. – Բայց մինևույն պահին դա այն *անհնարին*ն է, որը մեր ամեն մի փորձով *հնարավոր* ենք դարձնում:

Յուրաքանչյուր փորձի մեջ մեզ ինչ-որ բան չի հաջողվում, բայց և ինչ-որ տեղ հմտություն ենք ձեռք բերում: Ահա, կարծես, թարգմանությունը կա, բայց դա *չթարգմանված-թարգմանված*ն է: Թարգմանելին միշտ առկա է. այն, որ նախընծեռնվում է – թարգմանվում բանաստեղծության ընդերքից: Խոսքը ոչ այնքան գրառվածի մասին է, որքան այն, որ թարգմանելու փորձը նույնաման է իր՝ բանաստեղծի նախափորձի հետ: Բանաստեղծը և՛ մտախողված է թարգմանական խնդրով, և՛ միաժամանակ ընդդիմանում է դրան, ուստի փորձում է *գրել այնպես, ասես խոչընդոտում է իր թարգմանվելուն*: Բանաստեղծությունը, եթե դժվարամատույց չէ թարգմանության, մի՞թե բանաստեղծությունն է: Հակընդդեմ նման ապրումների մեջ է, որ գրվում է բանաստեղծությունը և, ըստ այդմ, թարգմանական խնդիրը ապրվում է որպես այդպիսին: Այլ կերպ ասած՝ այդ հակընդդիմությունն է, որ թարգմանական փորձ է բերում, և դա փորձ է արդեն ուրիշ լեզվի մեջ: Ահա թե ինչո՞ւ մեր ամեն մի իդիոմը կամ այդ իդիոմի մեջ անթարգմանելի պետք է բաց լինի - ոչուրամատչ ուրիշի լեզվի առաջ, այլ լեզվի համար: Իդիոմի այս սահմաններն են, որ ես բնորոշել եմ որպես «էկզապրոպրիացիա», այսինքն՝ սեփական լեզվի յուրացում չի նշանակում լինել միայն այդ լեզվի սահմաններում, լինել միայն քո տարածքում՝ քո տանը, այլ տվյալ լեզվի տիրույթներում ներառել-կրել մեկ այլ, մեկ ուրիշ, անկանոն լեզվական փորձ: Եվ դա նույն-չտարանջատված փորձի մեջ է մտնում (*approprié, désapproprié, entreigner, éigner, entreigner*, էկզապրոպրիցիա, էքսպրոպրիցիա): Ես կասեի այդ փորձը և՛ նույնն է, և՛ նույնը չէ: Լեզվական նման փորձը նույնական չէ իրեն: Դա տարբեր լեզուներում, այլևայլ պոետների մոտ, ինչպես և տարբեր հրապարակումներում և գրականության տեսակների մեջ միակերպ չէ, որ իրականացվում է, այլ տարաբնույթ: Համոզված եմ, որ տվյալ փորձը ուրիշ կերպ է վերապրել Գոգոլը, Պոլ-Կիրն կամ Դոստոևսկին, քան, ասենք, Ցելանը և Պրուստը:

Վ.Պ. – Ուզում եմ որոշ պարզաբանումներ մտցնել հարցի մեջ, մինչ այն Ձեզ ուղղելը: Նախ պետք է ասեմ, որ ամենկին էլ հեշտ չէ իմն ներառվա լինել մի տարածքում, ուր դուք եք գործում. հեշտ չէ հարաբերակցել այն կոնտեքստը (նկատի ունեմ՝ ինտելեկտուալ կոնտեքստը), որտեղ ես եմ և դրանից միանգամայն տարբեր մշակութաբանական-ինտելեկտուալ մի գոյակցություն, որը ձերն է և նախանշված է ձեր ստեղծագործություններով: Դեկոնստրուկցիան կարելի է բնորոշել որպես անտրամաբանական հակասությունների տարասեռ բազմության մեջ և այլաբնույթ դիսկուրսիվ հնարավորություններում պարզություն մտցնելու

փորձ: Սա շարունակապես իշխել է փիլիսոփայական փաստարկներում, եթե նույնիսկ տրամաբանական հակասություններ չկան նրանցում: Անտրամաբանական հակասությունները, որ դուք քննության եք առնում, պահպանվում են անզամայն դեպքում, երբ լուծված են տրամաբանական հակասությունները: Սա նշանակում է, որ փիլիսոփայական առանցքային հակասությունները ոչ այնքան միատարր են-պարզ, թեև որոշ փիլիսոփաներ ընկալում են անտարրալուծելի, ոչ բաղադրյալ, «ատոմական»: Եվ այդ պարզությունը հաճախ կարող է դրսից թվալ: Մինչդեռ դուք բացահայտում եք այն բազմակերպությունը, որ թույլ է տալիս տեքստային ստրատեգիան այդ թվացյալ պարզության մեջ: Դա մի ստրատեգիա է, որ չի բացառում դիսկուրսիվ «բռնությունը» հանուն այդպիսի անպարզությունների պարզեցման: Բայց այն տեքստուալ իրավիճակը, որը մերն է, խստորեն տարբեր է ձեր տեքստուալից, որին սովորաբար դուք եք առնչվում:

Ի՞նչ առումով եմ ես տարբերությունը տեսնում: Մեր մշակույթում անտրամաբանական հակասությունները, ըստ իս, այնպես ակնհայտ են, որ կարիք չունենք նրբահնար բացապարզումների, որպեսզի ի հայտ դրվեն դրանք՝ վերառնված իրենց խորքերից: Մեր հակասությունները հենց մակերևութային են, ընդ որում այնպես բազմաբնույթ և անթաքույց, որ, կրկնում եմ, կարիք չունենք հատուկ գործադրության, ինչի շնորհիվ կարող էինք դարձնել անառարկելիորեն ակնհայտ: Վերջերս, երբ պատրաստվում էի «Դեկոնստրուկցիան գեղանկարչության մեջ» թեմայով հոդված գրել՝ հիմնադրյուր ունենալով մախառաջ ձեր աշխատությունը («Ճշմարտությունը գեղանկարչության մեջ»), ես այդտեղ առանձնապես հստակ ըմբռնեցի, թե ինչ մեծ տարբերություն կա խորհրդային նկարչի և իր ժամանակին Տիտյուս-Կարմելի և անգամ Վան Գոգի առջև եղած խնդիրների միջև: Մեզ մոտ տեսողական (վիզուալ) մշակույթը և այն ամբողջ մետաֆիզիկականը, որ ենթադրվում է այդ մշակույթով, Ստալինի ժամանակներից սկսած, կեսդարյա այս ընթացքում փորձել են այն աստիճան ջնջել-խաթարել, որ կանգնել էինք մի անսովոր պորբլեմի առաջ. ինչպե՞ս վերականգնել մեր տեսողականը, ինչպե՞ս վերականգնել այստեղ մետաֆիզիկան: Այժմ մեր նկարիչները միտված են նման խնդիրների: Նրանց դեկոնստրուկտիվ ջանքերը ուղղված են «տեսողականի» մեջ մեր որոշ կորուստների վերականգնմանը: Նրանք փորձում են ստեղծել այնպիսի վիզուալ-նկարչական իրավիճակներ, որտեղ հնարավոր է հայեցում: Այս տեսակ իրավիճակը պայմանավորված է եղել բռնի-ընկալողական մեր մշակույթով, որը թելադրական ուժ է ունեցել մեզ մոտ: Դա մշակույթ էր «փոխընծայման» ոգով: Ես նկատի ունեմ Ժ. Բատայի և Մ. Մոսսի գրառումները հյուսիսամերիկյան հնդկացիական պրիմիտիվ ցեղախմբերի և հասարակության առնչությամբ: Մեր խնդիրը սկզբունքորեն այլ է. որպեսզի իրականացնենք դեկոնստրուկցիա, մենք դեռ պետք է վերականգնենք դեկոնստրուկցիայի հնարավորությունը մեզ մոտ: Ի՞նչ մտածումներ ունեք այսպիսի առանձնահատուկ մշակութային իրավիճակի շուրջ:

Ժ.Դ. - Կարծում եմ՝ սա շատ եական է և այն ամբողջը, որը հիշեցրիք, անկաս-

կածողներն մոռացության չպետք է տալ: Բայց ես նաև չպետք է համաձայնեմ, երբ դուք ղեկոնստրուկցիան ներկայացնում եք որպես հնարավորությունների, կանոնների, հնարքների կամ գործամիջոցների նախապես տրված այնպիսի մի կառույց, որը կարելի է գործադրել ամեն մի նոր իրադրության կամ ցանկացած նոր տեքստային ամբողջականությունների նկատմամբ: Դեկոնստրուկցիան, նախ ասենք, հակասությունների պարզ տրամաբանական կազմամասնա-հատումը չէ, տրամաբանական «մերկությունը» ցույց տալը չէ: Դա իրականացնում է գլխավորապես ոչ այդ մակարդակում և ոչ միայն միջոց է հակասությունների «մերկությունը» ցույց տալու կամ դրանք քննադատելու և ղեկոնստրուկցիայի ենթարկելու...

Վ.Պ. – Կամ, եթե կուզեք, այդ տրամաբանական հակասությունների «աստառը» ի ցույց դնել...

Ժ.Դ. – Ճիշտ է, թեև դա բազմաթիվ ժեստերի մեջ մեկ ժեստ է ընդամենը: Համոզված եմ և պնդում եմ, որ գոյություն չունի մեկ ղեկոնստրուկցիա: Հաճախ, և մասնավորապես ԱՄՆ-ում, բանավիճային երկխոսությունների ժամանակ, սկսում եմ նախ այն բանից, որ փոքրատառով եմ գրել ղեկոնստրուկցիա բառը և երբեք՝ եզակի թվով: Դեկոնստրուկցիաներ իրականացնում են ամենուր: Դրանք պայմանավորված են մասնահատուկ, լոկալ-իդիոմատիկ նախադրյալներով: Քանի որ դուք վկայակոչում եք իմ աշխատանքները, ասեմ, որ որոշ օրինակների դեպքում (որոնք ինձ համար նախընտրյալ նշանակություն են ունեցել, եթե դիմել եմ ղեկոնստրուկցիայի) չպետք է դրանք ընկալել որպես ընդօրինակության նախատիպ: Իմ տեքստերը բովանդակում են ղեկոնստրուկցիային վերաբերող մի շարք ամրագրումներ, ինչպես և բազմաթիվ օրինակներ, որոնք անհրաժեշտորեն մեղքերված են ի հետևանս կենսագրական այն առանձնահատկությունների, որ ես եմ ունեցել: Տեքստերը, որոնց հետ ես գործ եմ ունենում, ֆրանսերեն են, և ինձ զբաղեցնում են կարևոր նշանակություն ունեցող որոշ առանձին-տրված իրավիճակներ: Բայց միևնույն է, ես գիտեմ և հաճախ եմ հիշեցրել իմ ընթերցողներին (ինչպես վերջերս Նատաշային ուղղված իմ պատասխանի էությունը դա էր). ղեկոնստրուկցիան միշտ եզակի է-անզուգահեռ և պայմանավորվում է այն տարաբնույթ-կոնկրետ հանգամանքներով, որտեղ այն առաջանում է: Ուստի, կարծում եմ, եթե դուք փորձեք ղեկոնստրուկցիայի, ասենք, ֆրանսիական մոդելը տեղայնացնել-իրականացնել ձեր պայմաններում, ոչինչ չի ստացվի, և փորձը կծախողվի: Խորհուրդ չեմ տալիս, այլ հակառակը. ենթադրում եմ, որ յուրաքանչյուրս պատմական, քաղաքական, գաղափարական ինքնահատուկ մեր տարածքում պետք է ձեռք բերենք-յուրացնենք ղեկոնստրուկտիվ մեր միջոցները, ոչ թե վերստին ղեկոնստրուկցիա հայտնագործենք: Ուզում եմ, թե ոչ, ղեկոնստրուկցիան իր գործն անում է. այն իր լիարժեք ընթացքի մեջ է, և ինչ որ կատարվում է այժմ ԽՍՀՄ-ում, ինքնահատուկ ղեկոնստրուկցիա է գործողության մեջ: Այնուհանդերձ, դուք պետք է իրացնեք ձեր միջոցները և դրանք պետք է ներառեք ձեր աշխատանքներում,

նամակներում կամ քաղաքական գործունեության մեջ: Պետք է միայն ձեռք հատուկ տարածական ընդգրկում, ինչպիսին... դեհ, ասենք, ինչպիսին քիչ առաջ նկարագրում էինք՝ կապված ստալինյան ժամանակների հետ: Օրինակ՝ արվեստների վերաբերող հնարավորությունների վերակառուցումները (ռեկոնստրուկցիա) ղեկոնստրուկցիայի մի մասն են ընդամենը, և պետք է ասեմ՝ ինչը որ նկարագրում էիք, այդ նույնը այլ ձևով հատկանշական է Ֆրանսիայում կամ ԱՄՆ-ում: Դեկոնստրուկցիան այստեղ ևս միջոց է արվեստներում նոր արտահայտչամիջոցների համար տարածություն բացելու: Այս նոր տարածությունը, իհարկե, նույն հայացքով չենք կարող դիտել, որքանով նրա մախկին կառույցները այստեղ այլ կերպ են քայքայվել, բայց չէ՞ որ, միևնույն է, դրանք ոչնչացվել են, և բնավ էլ Ստալինի կարիք չեն ունեցել ավերելու արվեստի որոշ հնարավորություններ: Այնպես որ միշտ իրականացվում է *ինչ-որ մի նոր բան* և միշտ անհրաժեշտ է դառնում վերակառուցել *այդ նորի* հնարավորությունները:

Վ.Պ. – Ներեցեք, բայց խոսքը ոչ թե արվեստների որոշ հնարավորությունները կանխել-քայքայելուն էր վերաբերում, այլ մշակույթի ենթակառույցները (ինֆրաստրուկտուրան) կամ հիմնաշերտերը ավերելուն:

Ժ.Դ. – Ոչ մի տարբերություն, դա նույնն է: Ուզում եմ բերել մի օրինակ, որը սույն խնդրականում իր անհամատեղելիությամբ կարող է հեզմական թվալ: Միանգամայն անուրջ օրինակ է, բայց դուք կհասկանաք՝ ինչ եմ ուզում ասած լինել: Կարծում եմ, որ Ֆրանսիայում փիլիսոփայության դասավանդման ենթակառույցները (ինչը որ կուզենայի այդ դասավանդումներում տեսնել) վերջին երկու հարյուրամյակի ընթացքում քայքայվել են, - ասենք այսպես, - որպեսզի չշոշափվեն վաղագույն և խորը երևույթները: Եվ մեզանում ումանք, ինչպես ժամ-Լյուկ Նանսին և ուրիշները, փորձում էին հենց այդ ղեկստրուկցիոն-քայքայիչ ընթացքը վերլուծել. ի՞նչ նախադրյալներով էր, որ այդ անկումը սկսվեց, ի՞նչ անհրաժեշտություններ էին գործում, ի՞նչ դրդապատճառներ, ի՞նչ ընթացակերպի մեջ է եղել այն և այլն: Եվ այդ ամբողջը համուճ փիլիսոփայության դասավանդման այնպիսի հաստատությունների վերակառուցման, որը իր մեջ կնախանջի նոր հնարավորություններ: Ջուզահեռը կարող է անուրջ թվալ, որովհետև չի կարելի Ֆրանսիայում դասավանդման խնդիրը համեմատել խՍՀՄ-ում տիրող իրավիճակի հետ: Բայց որքան էլ անուրջ կարող է օգնել նաև բացահայտելու մեխանիզմը: Դեկոնստրուկցիան վերլուծ[ող]ական ձև է ոչ միայն հասկացությունների և իմաստավորումների համար, այլև իմաստոտությունների, որպեսզի նրանց վերահաստատումը և վերակառուցումը ապահովի, չէ՞ որ, եթե Ստալինը ոչնչացնում էր մշակութային ինչ-որ ենթակառույցներ, փոխարենը հաստատագրում էր համակարգեր, որ բավականաչափ ամուր էին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հնչյունը արտասանողական-ընկալողական միավոր է, իսկ հնչույթը հոգեբանական (Բ. դե Կուրտենե):

2. Տոպոլոգիա – հուն. topos, տեղ, տեղայնություն: Հայերեն համարժեքը՝ տեղագրական, տվյալ դեպքում, կարծում ենք, ինչ որ չափով հաղորդում է տոպոլոգիական լեզու դարձվածքի էությունը:

3. Ֆանտազմ – լատ. phantasma, երևակայածին, այստեղ՝ տարածական տեսիլք:

4. espacement – տարածականացում, տարածական դառնալը:

5. Խոսքը Պուշկինի պոետիկայում հաճախ հանդիպվող բանաստեղծական այն «համր» տներին է վերաբերում, որոնց ներառում են «ռիթմական լիցք»:

6. Լոգոցենտրիզմի դերիդայական վերլուծումները դեկոնստրուկտիվիզմի կարևորագույն կետերից են, եթե ոչ հիմնականը: Թե ինչ դեր ունի լոգոսակենտրոնության դեկոնստրուկցիան Դերիդայի փիլիսոփայության մեջ, հնարավոր է, ինչ-որ բան հուշում է մեր դիտարկումներից հետևյալ ասույթը. Հուսեթլը և Դերիդան լսում են միևնույն գրամմաֆոնը (gramma-գիր և phonema-հնչույթ), տարբերությամբ սակայն, որ Հուսեթլը լսում է երաժշտությունը՝ առանց ծայնագրիչ ասեղի, իսկ Դերիդան ասեղի խզզոցին է ունկնդիր՝ առանց երաժշտության:

7. Ֆոնոցենտրիզմ – հուն. phonema, հնչույթ-հնչյուն, հնչույթակենտրոնություն:

8. Ռեֆերենտային կասեցում – պրոցեսի դանդաղացում (հմմտ. Դերիդայի գերդանդաղ ընթերցանության տեսությունը), հաճախ մակերեսային մոտեցմամբ:

9. "psyche..." գրականագիտական-փիլիսոփայական հանդեսների մասին է խոսքը:

10. Dasein – Հայդեգերի «Գոյություն և ժամանակ» աշխատության մեջ առանցքային հասկացություն է. բառացի՝ այստեղ-առկա կեցություն, ուր մարդը ենթարկված է «ապրիորի» երևույթների՝ մահ, վախ, հոգս և այլն, որոնք էլ նախադրյալ են ոչ թե գոյից՝ Ոչինչին հետևություններով, այլ Ոչինչից՝ գոյ կանխորոշվածությամբ:

11. Aufklärung – պարզեցում, լուսաբանում:

12. Էկզալտացիա – լատ. exaltatio, բառացի՝ հակում-ծգտում, այստեղ՝ հուզական հագեցվածություն, «հուզավառ» վիճակ:

(շարունակելի)

Թարգմանությունը՝
ՄԱՆԱՍԷԻ